ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*26 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 38*

*26.04.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ*
*ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2021 թվականի մարտի 26-ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը.
   1) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   2) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 10.11.2016Թ.-Ի ԹԻՎ 56 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   3) ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   4) <<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   5) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.03.2021Թ.-Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   6) ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*26 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 39-Ն*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Տալ համաձայնություն համայնքի բյուջեի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 7306.7 հազ. ՀՀ դրամ պակասեցնել ավելացնելով՝

- 640.0 հազ. ՀՀ դրամ բաժին 5 խումբ 1 դաս 1 աղբահանության ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ համայնքի Արսենյան 9 բ/բ շենքի հարակից տարածքում և ,,Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի հարակից տարածքում աղբամանների տեղադրման հարթակների կառուցման համար :
- 3500,0հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և հյամայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ համայնքի Գագարինի փողոցի 180 գմ հատվածում, Խաչատրյան փողոցի 280 գմ հատվածում, Չալաբյան փողոցի 315 գմ հատվածում և Խանջյան փողոցի 410 գմ հատվածում փողոցային լուսավորության ցանցի ընթացիկ նորոգման աշխատանքների ֆինանսավորման համար :
- 605,7 հազ. ՀՀ դրամ բաժին 5 խումբ 6 դաս 1 շրջակա միջավայրի պահպանություն /այլ դասերին չպատկանող/ ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ Եղեգնաձոր քաղաքի միջով անցնող գետի հունի սելավատարի մասնակի մաքրման աշխատանքների ֆինանսավորման համար:
- 1873,0 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ոլորտի աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածին /հոդված 4111/ ,,Կրթության ազգային ինստիտուտ,, ՓԲԸ-ի Եղեգնաձորի մասնաճյուղի մասնաշենքի՝ համայնքապետարանին տնօրինության հանձնված մասի պահպանության իրականացման համար աշխատողների աշխատավարձի վճարման համար :

- 165,0 հազ ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ համայնքի Երևանյան խճուղի/կամրջին կից/, Երևանյան խճուղի/ավտոլվացման կետին կից/, Չարենցի փողոց/նախկին ինկուբատորին կից/, Վ Գևորգյան փողոց /կամրջին կից/, Մոմիկի փողոց/հյուրանոցին կից/, Լևոնյան փողոցի, Գլաձորյան և Բաղդասարյան փողոցների խաչմերուկին կից, Սևակի փողոց/թիվ 5 բնակելի շենքին կից/,Անդրանիկի փողոց /Սև քար կոչվող տարածք/հասցեներում հրշեջ հիդրանտների տեղադրման ֆինանսավորման համար:
- 400.0 հազ ՀՀ դրամ բաժին 2 խումբ 5 դաս 1 պաշտպանություն /այլ դասերին չպատկանող/ ոլորտի այլ նպաստներ բյուջեից հոդվածին /հոդված 4729/ զոհված զինծառայողներ Սևակ Վարդանի Օհանյանի և Կարեն Դերենիկի Զաքարյանի ընտանիքներին աջակցություն ցույց տալու համար, յուրաքանչյուրի ընտանիքին՝ 200.0 հազ. ՀՀ դրամ:
- 40.0 հազ ՀՀ դրամ բաժին 10 խումբ 7 դաս 1 սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ ոլորտի հուղարկավորության նպաստներ բյուջեից հոդվածին /հոդված 4726/ Արցախյան պատերազմում զոհված զինծառայող Կարեն Դերենիկի Զաքարյանի աճյունը Արմավիրի մարզի Մեծամոր համայնքից Եղեգնաձոր տեղափոխման ծախսերի ֆինանսավորման համար :
- 83.0 հազ ՀՀ Դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ համայնքի գերեզմանոցի ճանապարհի բարեկարգման աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*26 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 40*

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 10.11.2016Թ.-Ի ԹԻՎ 56 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկել 5 ավագանու անդամների և հաստատել անհատական կազմը՝

- Մովսիսյան Դավիթ
- Ոսկանյան Սամվել
- Սմբատյան Վալոդյա
- Խաչատրյան Գառնիկ
- Ալոյան Արտակ

2. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 10.11.2016թ.-ի <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 56 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 41*

*ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ.-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 22.12.2009թ.-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 1/փ-101 դրական եզրակացությունը.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել 0.0658 հա մակերեսով, 10-001-0046 ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողի փոփոխությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
*26 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 42*

*<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՔՆՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Անհատույց ի պահ ընդունել <<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2078047 վկայական), ՀՀ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Արսենյան 11 հասցեում գտնվող 734.8 քմ մակերեսով վարչական շենքը և 0.30 հա մակերեսով հողամասը և վերադարձնել այն պահպանված վիճակում՝ առաջին իսկ պահանջով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 43*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.03.2021Թ.-Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Համայնքի ավագանու 25.03.2021թ.-ի թիվ 24 որոշման բովանդակության 2-րդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<2. Հողատարածքին տալ հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ համայնք Եղեգնաձոր ք., Մյասնիկյան փողոց թիվ 8/1:>>:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 44*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 25.01.2018թ. ,,Եղեգնաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 04 որոշումը.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Համայնքային բյուջեի սոցիալական հատուկ արտոնություննններ (այլ դասերին չպատկանող) ոլորտի բաժին 10 խումբ 7 դաս 1 այլ նպաստներ բյուջեից հոդվածից /հոդված 4729/ համայնքի կարիքավոր բնակիչներին հատկացնել օգնություն.
Խաչանուշ Գրիգորյան - 10000 ՀՀ դրամ, Վարդուհի Հովսեփյան -10000 ՀՀ դրամ, Նաա Խաչատրյան -10000 ՀՀ դրամ, Աշխեն Գրիգորյան -10000 ՀՀ դրամ, Հասմիկ Մինասյան - 10000 ՀՀ դրամ, Սամվել Սարգսյան - մերժել, Անուշ Մկրտչյան -10000 ՀՀ դրամ, Լավրենտ Աբրահամյան - մերժել, Հրաչ Ավագյան - մերժել, Սարգիս Հարությունյան /Հայրենական պատերազմի վետերան/ - 20000 ՀՀ դրամ:
2. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախում սանձազերծված պատերազմի հետևանքով վիրավորում ստացած Գևորգ Բաբաջանյանին հատկացնել օգնություն - 50000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*